



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 247/8-2 « 23 12 » 2022

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՐԻ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով,

հրամայում եմ

1. ԵՊՀ ռեկտորի 2022 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 241/81-Լ հրամանի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սահմանել, որ

ա) Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում ուղեգրերի ամրագրումը կազմակերպվելու է 2022 թ. դեկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում,

բ) սենյակների ամրագրման առաջնահերթությունը տրվելու է առավել վաղ վճարում կատարած աշխատողներին,

գ) ուղեգրերի արժեքը անհրաժեշտ է վճարել ԵՊՀ բանկային հետևյալ հաշվեհամարին.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Հ/Հ 1500001995480500 (AMD),

դ) մինչև ուղեգրի արժեքի վճարումը, սենյակների նախնական ամրագրման համար, աշխատողները պետք է դիմեն ԵՊՀ արհկոմիտե (ԵՊՀ կենտրոնական մասնաշենք 4-րդ հարկ 411 սենյակ), Ոսկեհատ Զաքարյանին /հեռ. 11-76, 010554612, 060710176/:

ե) ուղեգրերի համար վճարում կատարած աշխատողները վճարման կտրոնը ներկայացնում են ԵՊՀ արհկոմիտե սենյակների վերջնական ամրագրման համար:

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ բոլոր աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՐ

Հ. Կ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ